

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/9**

**27 հունվարի 2015 թ.**

Քննարկվեց «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 30.12.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 24.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 275134 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի կողմից 24.12.2014 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 275134 որոշումը, որով ընկերության տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ տնօրենի կողմից հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 24.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 275134 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանը 12.01.2015 թ-ին կայացրել է թիվ ՎԴ/7547/05/14 որոշումը, որի համաձայն ընկերության տնօրենի հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 30.12.2014 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ**

